

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Արմավիրի մարզի Տանձուտ համայնքի ղեկավարի կողմից 2014թ. հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը կատարած աշխատանքների մասին

Ներկայացված է 19.01.2015թ. համայնքի ժողովում:

/Զեկ. համայնքի ղեկավար Մ.Պետրոսյան/

Հարգելի տանձուտցիներ և հյուրեր թույլ տվեք Ձեզ ներկայացնելու Տանձուտի գյուղապետարանի և ավագանու կողմից 2014թ-ի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը կատարած աշխատանքները:

Ընթացիկ ժամանակաշրջանում անցկացրել ենք 10 ավագանու նիստ՝ կայացրել 43 որոշումներ: Պատասխանել ենք ստացած բոլոր 184 գրություններին և 108 դիմումներին,

Համայնքի ղեկավարի կողմից հաշվետու ժամանակաշրջանում ընդունվել է 64 որոշում և արձակվել է 25 կարգադրություն:

Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրվել է 1180.0 հազ. դ. դրամական օգնություն:

Համայնքի բյուջեի հաշվին փոխվել է գյուղապետարանի 3 պատուհանները:

Մշակույթի տան համար ձեռք է բերվել թենիսի դաշտ:

Ամանորի տոնի կապակցությամբ մշակույթի տանը կազմակերպել ենք միջոցառում, գյուղի 2-5 տարեկան և դարոցի 1-5-րդ դասարանի երեխաներին բաժանվել է նվերներ:

Համայնքի մեկ փողոցում անցկացվել է նոր կոյուղագիծ:

Կատարվել է խմելու ջրի խորքային հորերի կապիտալ վերանորոգում և ապահովել բնակիչներին անխափան ջրամատակարարում:

Կատարվել է խմելու ջրի սանիտարաքիմիական և մանրէաբանական հետազոտություններ:

Վերանորոգվել և ավելացվել է գյուղի ցերեկային լուսավորությունը:

Համայնքում սիստեմատիկ կատարվել է աղբաթափում:

Գյուղապետարանում ստեղծվել է հանձնաժողով կատարվել է անասունների և համայնքի տարածքում գտնվող հողերի և ցանքերի հաշվառում: Հանձնաժողովի կողմից կատարվել է մարտի 29-ից - 31-ը ցրտահարությունից վնասված 17.68 հա հողատարածքների հաշվառման աշխատանքներ:

Մեծ հաղթանակի 69-րդ տարելիցի նախօրյակին խնամվել է գյուղի կենտրոնում գտնվող հուշարձան:

Գյուղապետարանը ավագանու անդամների հետ կազմակերպված ձևով անցկացրել է զարնանային և ծմեռային զորահավաքները: Զինակոչիկների և նրանց ծնողների հետ անցկացրել ենք ռազմահայրենասիրական թեմայով զրույցներ, որի արդյունքում ոչ մի զինակոչիկ չի խուսափել զինվորական ծառայությունից:

Տուժած թվով 30 հողօգտագործողներին անհատույց հատկացվել է սերմեր /ծմերուկ 3կգ., լոլիկ 0.5 կգ, վարունգ 0.8 կգ. սեխ 1կգ /: հողօգտագործողներին զիճվել է 394413 դրամ հողի հարկեր:

Գյուղում գործում է 19-րդ դարի եկեղեցի, որը օգնում է համայնքի բնակչության հոգևոր դաստիարակությանը:

Ընթացիկ տարում կատարվել է համայնքի կոյուղու ցանցի մաքրման աշխատանքներ:

Սահմանված կարգով կազմակերպվել է գույքահարկի և հողի հարկի գանձման աշխատանքները:

Կատարվել է խմելու ջրի ջրագծերի վթարների վերացման աշխատանքներ:

Հողի հարկի տարեկան պլանը նախատեսված է 6800.0 հազ.դրամ փաստացի կատարվել է 6174.5 հազ.դ. 90.8 % -ով:

Վարձակալական հողերի վարձավճարների տարեկան պլանը 1800.0 հազ.դրամ. փաստացի կատարվել է 1347.1 հազ.դ. , 74.8 % -ով:

Գույքահարկի գծով տարեկան պլան է նախատեսվել 2602.7 հազ.դր., փաստացի կատարվել է 3460.5 հազ.դրամ, 132.9 % -ով:

Տեղական տուրք է նախատեսվել 400.0 հազ.դրամ փաստացի 381.5 հազ.դ. 95.4 % -ով:

Պետությունից ստացված դոտացիան կատարվել է 100%-ով 25298.7 հազ.դրամ:

Հողի օտարում նախատեսվել է 1000.0 փաստացի 805.3 հազ.դ. 80.5 %

Գյուղապետարանը մասնակցել է դպրոցի վերջին զանգի միջոցառմանը, շրջանավարտներին տրվել է դրամական օգնություն և կազմակերպել է միջոցառում:

Հունիսի 2-ից համայնքում գործում է մանկապարտեզ, որտեղ հաճախում են 53 երեխա:

Աշխատավարձի պարտքեր չունենք:

Համայնքն ունի բազմաթիվ չլուծված խնդիրներ:

Հետագա ծրագրերում նախատեսված է ակումբի և մանկապարտեզի վերանորոգում:

Գյուղապետարանի կողմից արվում է ամեն ինչ աշխատանքները կազմակերպված և արդյունավետ անցկացնելու համար:

Համայնքի ղեկավարը բարձրացրեց հետևյալ հիմնախնդիրները

1. Մանկապարտեզի շենքի վերանորոգում
2. Մշակույթի տան վերանորոգում
3. Համայնքի կոյուղու վերանորոգում
4. Գյուղապետարանի շենքի վերանորոգում
5. Հուշարձանի վերանորոգում
6. Նոր ջրագծի կառուցում
7. Գրադարանի շենքի վերանորոգում

Տանձուտ համայնքի ղեկավար



Ս. Պետրոսյան